№ 143 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 — 1888 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 № 143

ՏԱՍՆ ԵՒ Վ. ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԵԿՈՂ 1889 ԹՒԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բացված է 1889 թուականի բաժանորդագրութիւնը

„ԱՂԲԻՒՐ“

ՄԱԱՄՍԵԱՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ

Եօթերորդ տարի

կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ։ Եթէ առաջիկայ 1889 թուականին «Աղբիւրի» բաժանորդների թիւը հասնէ 3,000-ի, ը. մասը կը հրատարակվի նոյն չափով, որքան ա. մասն է։ Առաջին պրէմիան է մի գեղեցիկ օլէօգրաֆիա՝ «ԱՐՇԱԼՈՅՍ», անցեալ տարվայ պրէմիայի կրկնապատիկ մեծութեամբ։ Ստացված են արդէն 3,000 օրինակ, բաժանորդ գրուողը հէնց իսկոյն կը ստանայ ա. պրէմիան, որ թէ Թիֆլիսում և թէ հայաբնակ քաղաքներում մեր գործակալների մօտ դրված են ի ցոյց հասարակութեան։ Բ. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի «Արարատ» մեծադիր պատկերը (աւելի մեծ քան «Աղթամարայ ծովակը»), վիճակ կը դցվի մեր բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին։ «Արարատ» տանող բաժանորդը եթէ կամենայ՝ կարող է նրա փոխարէն ստանալ 100 բուբլի պրէմիան՝ Պատի օրացոյց 1890 թ-ի, կուղարկվի բաժանորդներին դեկտեմբերի №-ի հետ։ Բացի դրանից՝ տարվայ ընթացքում կառաջարկվեն հանելուկներ և բերուններ, որոնց առաջին վճռողները կը ստանան մրցանակներ—գրքեր, պատկերներ, ալբոմներ, դրասենեակի զարդեր և այլն։

Բովանդակութիւն։ Մասն առաջին։ I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Նոր լուրեր։ V) Այլ և այլք։ Զուարճալի։ VI) Մանկական ֆրեօբէլեան, չափամատի և այլ խաղեր։ Բերուններ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, չուտասելուկներ։ VII) Երգեր՝ ձայնագրած (նոտաներով)։ Մասն երկրորդ. VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խառն լուրեր։ XII) Պատասխաններ։ Յայտարարութիւններ։

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը 3 ր. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 4 հատ 7 կ. մարկաներ։ Ապառիկ ոչոքից չէ ընդունվում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue «AGBUR»։

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական պարագիտներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական դատաստանի առջև. Ռուսաց լեզուի դասագրքերի առիթով. Նամակ Իգդիրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր և. Պօլսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԻՏՆԵՐ

II

Մենք ասեցինք մեր անցեալ համարում, որ „Փորձի“ յետոյ հետզհետէ երևացին մեր գրական ասպարիզում „Արձագանք“ շաբաթաթերթը և մի այլ թերթ, որը իրան ամենօրեայ է համարում։

„Արձագանքը“ երևալուն պէս շարունակեց տարիների ընթացքում նախկին „Փորձի“ բռնած քաղաքականութիւնը „Մշակի“ վերաբերմամբ, այսինքն աշխատում էր իրան սառն, անտարբեր պահել „Մշակի“ վերաբերմամբ, ուզենալով ապացուցանել հասարակութեանը որ պէտք չունի ուշադրութիւն դարձնելու „Մշակի“ յարուցած մոքերի վրա, ուրիշների պէս կարիք չունի „Մշակի“ պարագիտը լինելու, „Մշակի“ մոքերով սնվելու, նրա մոքերով ապրելու, այլ ջանում էր „Փորձի“ պէս իբր թէ մի ինքնուրոյն, անկախ դիրք բռնել։

Միւս թերթը, ընդհակառակն, իր առաջին համարի երևալուց արդէն լաւ ըմբռնեց իր տեղը ռուսա-հայոց մամուլի մէջ, լաւ հասկացաւ որ „Մեղուի“ մահից յետոյ այլ ևս ոչ մի հայոց թերթ չը մընացաց, որը ցոյց տալով իրան իբր հայոց անցեալի աւանդապահ, անշարժութեան պաշտպան, հանդիսանար իբր „Մշակի“ հակաօրգան, իր բան ու գործը շինելով ամեն Աստուծու օր պատասխանել „Մշակին“, ծռմռել նրա յայտնած մոքերը և անպայման հակասել նրան.... Նա հասկացաւ որ ինքնուրոյնութիւնից, անկախ, սեփական մոքերից զուրկ հայոց թերթը կարող է գոյութիւն ունենալ միմիայն այն ժամանակ, երբ „Մշակի“ պարագիտը կը դառնայ, „Մշակի“ մոքերով, նրա նիւթերով, նրա յարուցած մոքերով, նրա հիւթով կապրի, ինչպէս մի կատարեալ օտարակեր, հասկացաւ որ եթէ այդպէս չը վարվի,—անմիջապէս կը սպառվի, ոչինչ նիւթ չի ունենայ գրելու համար....

Բայց ինչպէս անէին մեր հակաօրգանները, մեր պարագիտները որպէս զի ծածկէին իրանց ուղեղի աղքատութիւնը։ Նը-րանք պէտք է ժողովրդի աչքերին թոզ փչէին, և իրաւ այնքան խորամանկ գտնվեցան, որ հաւատացնում էին ժողովրդին թէ կոչված են պաշտպանելու ազգի և եկեղեցու գոյութիւնը „Մշակի“ ամեն բան քանդող և վնասակար մոքերի դէմ....

Այդ կողմից մեր հակաօրգանները յաջողաբար, կ օ ն ս է կ վ է ն ա էին վարվում։ Իրանց մտաւոր աղքատութիւնը և ինքնուրոյն կերպով մտածելու, որ և է միտք արդիւնաբերելու անընդունակութիւնը ծածկելու համար, իրանց գոյութեան անհրաժեշտութիւնը, իրանց raison d'être ապացուցանելու համար՝ նրանք պէտք է յայտնէին, որ պ ա ր տ ա ւ ո ր են, կ ո չ վ ա ծ են „Մշակի“ դէմ մաքառելու, իսկ իրանց պարագիտմը ծածկելու համար, „Մշակով“ ապրելու իրանց անհրաժեշտութիւնը վարագուրելու համար՝ նրանք հուչակում էին „Մշակը“ մի թէև վնասակար, բայց զօրեղ օրգան, ստիպված էին նրան մի ահագին, մի սարսափելի ոյժ համարել....

Այդ կողմից նրանք յաջողդաբար էին վարվում և այնքան խորամանկ գտնվեցան, որ կարողացան թոզ փչել ժողովրդի աչքերին, գրաւել, խաբել նրան և հաւատացնել նրան թէ իրանց գոյութիւնը անհրաժեշտ է։

Մինչև այդ ժամանակ, ինչպէս ասեցինք, „Արձագանքը“ յամառում էր շարունակել իր առանձնացած, անտարբեր գոյութիւնը, բայց որովհետև առանց „Մշակի“ պարագիտը լինելու, առանց „Մշակին“ միշտ պատասխանելու, առանց „Մշակի“ յայտնած մոքերից օգտվելու, միայն մեզ հակասելու համար, առանց „Մշակի“ նիւթովը ու հիւթով սնվելու, նա ինքն անկարող գտնվեց սեփական մոքեր յայտնելու, ինքնուրոյն մոքերով ընթերցողի ուշադրութիւնը դրաւելու,—ուստի և դատապարտված էր անգոյն, անբովանդակ, ամենքից մոռացված անկատելի, ողորմելի գոյութիւնը քարշ տալու....

Այսպէս անցնում էին տարիներ. պարագիտներից մէկը „Մեղուն“ դադարած էր, միւսը շարունակում էր դեռ իր ապարդիւն և անհամ ն է յ ն ի մ ն ե ր ը,—և ահա „Արձագանքը“, գրական երկար փորձից յետոյ, խելքի է գալիս, յանկարծ հասկանում է իր ողորմելի խելքով, որ այժմեան հանգամանքներում, մինչև որ բացի „Մշակից“ ուրիշ ինքնուրոյն թերթ չը կայ ռուսահայոց ամբողջ գրական ասպարիզում, հայոց մամուլի մնացած թերթերը կարող են գոյութիւն ունենալ միայն այն պայմանով, որ անպատճառ ապրեն „Մշակի“ մոքերով, հակասեն նրան, լցնեն իրանց էջերը միմիայն „Մշակի“ յայտնած մոքերին հակառակ յօդուածներով, եթէ ոչ, գրելու նիւթ չեն ունենայ, կը սպառվեն, աննպատակ կերպով քարշ կը տան իրանց ողորմելի, անգոյն, ապարդիւն, ամենքից աննկատելի, մոռացված գոյութիւնը։ Եւ ահա „Արձագանքը“ վերջին տարին յանկարծ փոխում է իր ընթացքը, և մ ի ջ ից կ է ս է լ ի ն ո ւ մ բ ը ը ն դ ա ն ե լ ու նոյն դիրքը „Մշակի“ վերաբերմամբ, որը բռնած ունէին նրա նախորդ պարագիտ եղբայրակիցները.... Հրատարակվումեն համարներ համարների ետևից և ընթերցողը զարմացմամբ տեսնում է որ „Արձագանքի“ իւրաքանչիւր համարը, վերնագրից սկսած մինչև վերջին երեսի յայտարարութիւնները, „Մշակի“ դէմ յօդուածներով է լցված, ուղիղ այնպէս, ինչպէս այդ անում էին նրա նախորդները։

Զանազանութիւնը միայն դրա մէջն է, որ „Արձագանքի“ նախորդները այնքան եղուիտ, այնքան խորամանկ գտնվեցան, որ ծածկելու համար իրանց ուղեղի աղքատութիւնը և օտարակերութեամբ ապրելու անհրաժեշտութիւնը, հաւատացնում էին ազգին որ պարտաւոր են, կոչված են „Մշակի“ դէմ մաքառելու, և յաջողդաբար վարվելու համար ստիպված էին խոստովանվել որ „Մշակը“ մի վնասակար ոյժ է,—իսկ իր ընթացքը յանկարծակի փոխած „Արձագանքը“, որի խմբագրութիւնը ամբողջապէս բաղկացած է սպառված ու չորացած ուղեղով ապուշներից, ուրիշների պէս աչքակապութիւն անելու շնորհ էլ չունեցաւ և խրվեց ծիծաղելի հակասութեան մէջ ու կատարեալապէս խայտառակվեց։

„Արձագանքը“ իր գոյութեան վերջին տարվայ ընթացքում համ սկսեց իր բոլոր համարները սկզբից մինչև վերջը նուիրել „Մշակի“ մոքերի դէմ կռուելուն, համ էլ անդադար կրկնում է որ „Մշակը“ ուժասպառ է, „Մշակի“ խմբագիրը պառաւել է, բոլոր թարմ ոյժերը նրան թողել են, „Մշակի“ աշխատակիցները համբակ են, „Մշակը“ հոգեւաբքի մէջ է, „Մշակը“ ընկնում է....

Մենք չենք պահանջում ձեզանից, պ. Յովհաննիսեան, մարդասիրական զգացմունք դէպի ընկնողը, քանի որ ձեզ այդ տեսակ ազնիւ զգացմունքները անմատչելի են, ձեզ միայն մատչելի է անողորմ վարմունք դէպի թոյլերը և դէպի մարդիկ, որոնց մէջ այլ ևս պէտք չունէք,—բայց մենք ձեզանից պահանջում ենք լ օ գ ի կ ա։

Ի՞նչ Աստուծու, ասեցէք խնդրեմ, որտեղ է տեսնված, որ դէպի թոյլ, ազդեցութիւն չունեցող, հոգեւաբքին հասած, մեռնող օրգան՝ մարդիկ վերաբերվէին այդ աստիճան կատաղութեամբ, ինչպէս դուք էք վերաբերվում ձեր բոլոր ապուշ աշխատակիցներով դէպի „Մշակը“։

Եթէ „Մշակը“ մի կողմից ճանաչում էք թոյլ, ընկնող,—ի՞նչի համար միւս կողմից առաջին երեսի վերնագրից մինչև վերջին երեսի յայտարարութիւնները լցնում էք ձեր „Արձագանք“ շաբաթաթերթը „Մշակով“ և միմիայն „Մշակով“։

Թոյլերի, ընկածների, մեռնողների դէմ այդքան եռանդոտ կատաղութեամբ վարվելը ոչ թէ միայն տմարդութիւն է, բայց և վերին աստիճանի անմիտ բան է.... կամ պէտք է հանգիստ թողնէք անվնաս մեռնողին, կամ պէտք է խոստովանվէք որ սուտ էք ասում և աւելի քան որ և է ժամանակ „Մշակին“ սարսափելի ոյժ էք համարում, միայն թէ ձեր նախորդների, գրական պարագիտ եղբայրակիցների խելք էլ չունեցաք....

Նրանք գոնէ այնքան խելք ունեցան որ իմացան մի առ ժամանակ ժողովրդին խաբել, աչքակապութիւն անել, նրա աչքերին թոզ փչել. իսկ դուք միայն ծաղրելի դարձաք.... համ հաւատացնում էք որ „Մշակը“ ընկած, է, համ էլ բան ու գործը թողած՝ միջից կէս էք լինում այդ ընկածին, այդ թոյլին, ամեն կիրակի օր ձեր ամբողջ արտիլերիայով ռմբակոծելու։

Ոչ, պ. Յովհաննիսեան, դուք սուտ էք ասում, դուք խրվել էք, դուք ինքներդ թէ ձեզ և թէ ձեր ամբողջ ապուշ խմբագրութիւնը խայտառակել էք.... Թոյլերի, ընկնողների դէմ այդպէս չեն վարվում, այլ նրանց անտես են առնում, նրանց արհամարհում են, նրանց հետ այնպէս են վարվում, ինչպէս „Մշակը“ վարվեց վերջին տարիները այժմ արդէն մեռած „Մեղուի“ պէս պարագիտի հետ, ինչպէս վարվեց և մի այլ ստորաքարշ և աննպատակ պարագիտ թերթի հետ, ինչպէս և կը վարվի մի օր ձեզ ու ձեր թերթի հետ, երբ կը զգվի ձեր անշնորհ, ծիծաղելի, ապարդիւն, անգոյն անընդհատ ն է յ ն ի մ ն ե ր ի ն պատասխանելուց, կը տեսնի որ դուք ձեր անմիտ, ձեր ծամած ու մաշված, հնացած ու փտած մոքերի կրկնութիւններ անելում կատարելապէս սպառել էք ձեր սեփական և ձեր աշխատակիցների ուղեղի թ ա ր մ ո ւ թ ե ա ն մնացորդն էլ։

Այն ժամանակ մենք ձեր ուժասպառ թերթն էլ նոյնպէս կը շպրտենք, ինչպէս շպրտեցինք սեփական խելքով անընդունակ ապրելու միւս գրական պարագիտներին։

Երբ որ մի օրգանին մեռած են ճանաչում, նրան ոչինչ կարևորութիւն չեն տալիս, այլ անտես են առնում նրան։ Եւ ամեն հաւանականութիւն կայ, որ այն ընթացքով որով դուք էք գնում այժմ, պ. Յովհաննիսեան, դուք շատ շուտով կարժանանաք մեր այն արհամարհանքին, որին արժանացել են ձեր միւս եղբայրակից գրական պարագիտները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌՋԵՒ

—

Դժբաղդ Մանիի սպանութեան առիթով Թիֆլիսում տեղի ունեցած յուզմունքները հանգստացան, հասարակաց կարծիքը մի փոքր խաղաղեց, —ահա և Ալէքսանդր Թայիրով, որը մեղադրվում էր իբրև այդ դժբաղդութեան պատճառ,—հանդէս է գալիս, և այն էլ երկար ու բարակ բացատրութիւններով տեղական «Новое Обозрѣніе» լրագրի էջերում։

Պ. Ալէքսանդր Թայիրով ուզում է արդարանալ. նա պատմում է շատ բան. վշտահարի տօնով խօսում է այն մասին, թէ ինքը ինչպէս ծանօթացաւ 1868 թուին Մանիի հետ Վիէննայում, թէ ինչպէս Մանի մեծ և անմոռանալի օգնութիւն ցոյց տուաց իրան՝ հիւանդ ժամանակ, թէ ինչպէս ինքն յետոյ շատ բարեկամացաւ Մանիի հետ, օգնեց նրան փողով, թէ ինչպէս ապա Մանիի գործերը վատացան, թէ ինչպէս նա չը կարողացաւ վճարել իր պարտքը, և.... և վերջապէս ինքնասպանութեան դիմեց....

Վշտահարի տօնով խօսելով այդ տխուր «սպանութեան» մասին, պ. Ալէքսանդր Թայիրով այնու ամենայնիւ «պարտաւորվում է» խոնարհվելու իրողութեան առջև, սակայն այդ սպանութեան մէջ յանցաւոր է համարում ոչ թէ իրան, այլ Ներսէս Թայիրովին, այսինքն իր հօրեղբօր որդուն, իր ազգակցին, իր «ընկերոջը» ըստ հարստութեան և իր գործերի կառավարչին....

Իրան «արդարացնելու» գործում պ. Ալէքսանդր Թայիրով գլխաւորապէս հիմնվում է իր «հիւանդութեան» վրա, և յայտնում է, որ ամեն բան գանվում էր Ներսէս Թայիրովի ձեռքում։

«Ինձ ոչինչ յայտնի չէր, ասում է նա, որովհետև ծանր հիւանդ մարդը, որ հարստութիւն էլ ունի, մտածում է միայն իր կեանքը երկարացնելու և ոչ թէ հին պարտքերը հաւաքելու մասին»։ Մենք «աղքատութիւնից հարստութեան հասած» վաճառականներին ենք թողնում որոշելու թէ որքան ճիշդ է այդ հոգեբանութիւնը, մենք միայն զարմանում ենք, որ ցանկութիւն չունենալով պահանջել Մանիից նրան տուած 35,000 ր. գումարը (պ. Ալէքսանդր Թայիրով յայտնում է, որ Մանիին տուել է 35,000 ռուբլի, չը հաշվելով տոկոսը, Ալէքսանդր Թայիրով չէր ուզում իմանալ, թէ Ներսէս Թայիրովի և Մանիի մէջ պատահած տարաձայնութիւնների պատճառը ինչ էր և ով էր։ «Ես չէի էլ հետաքրքրվում իմանալ»,—աւելացնում է պ. Ալէքսանդր Թայիրով։ Բայց ինչ կը նշանակէ «չը հետաքրքրվելը»,—ահա հետաքրքիր հարց։

Սակայն թողնենք այդ դատաստանական բառախօսութիւնները. դրանից ոչինչ չի դուրս գայ։ Պ. Ալէքսանդր Թայիրովի արդարանալու ամբողջ հիմքը այն է, որ ինքը ոչինչ տեղեկութիւն չունէր այդ բոլորից, որ ամեն բան անում էր Ներսէս Թայիրով. և վերջապէս, երբ ինքն, Ալէքսանդր Թայիրով, այս տարվայ հոկտեմբերին Թիֆլիս եկաւ, և երբ այդ միջոցին Թիֆլիս եկաւ և Մանի, ինքն, դիջանելով իշխան Սումբաթովի, քաղաքագլուխ Մատինովի և իշխան Թումանովի անձնական խնդիրքին՝ առաջարկեց Ներսէս Թայիրովին նեղը չը գցել Մանիին», բայց նա չը կատարեց այդ առաջարկութիւնը և նոյն իսկ պահանջը (?!) և.... միւս օրը Ալէքսանդր Թայիրովի ականջին հասաւ Մանիի ինքնասպանութեան սարսափելի լուրը, որ և աւելի ծանր կերպարանք տուեց նրա հիւանդութեանը....

Այո, ճիշդ է, հասարակական զայրոյթը և հրապարակական կերպով արտայայտված զզուանքը կարող էր շատ վատ ներգործել նոյն իսկ ամենաամուր ջղեր ունեցող հիւանդի վրա....

Իր բացատրութեան վերջում, պ. Ալէքսանդր Թայիրով այն միտքն է յայտնում, որ եթէ ինքն մեղաւոր է այդ բանում, մեղաւոր է միայն այն պատճառով, որ անձամբ չէ կառավարել իր գործերը, և աւելի վճռական դիրք չէ բռնել դէպի Ներսէս Թայիրով, իմանալով մանաւանդ, որ Մանի ոչինչ չունենալով, անկարող է հատուցանել իր պարտքը։

Ասելով այդ բոլորը, պ. Թայիրով յոյս ունի, որ թէ մամուլը և թէ հասարակաց կարծիքը յետ կը վերցնեն իր վրա բարձած մեղադրանքը. իսկ հակառակ դէպքում, պ. Թայիրով առաջարկում է միջնորդ դատարան կազմել մի քանի անձինքներից, որպէս զի այդ միջնորդ դատարանը որոշէ, թէ արդեօք մեղաւոր է Ալէքսանդր Թայիրով այդ բանում,—թէ ոչ։

Խոստովանում են,—մենք առ այժմ դժուարանում ենք մի որոշ վճիռ տալ պ. Թայիրովի արդարանալու ձգտումին։ Մենք կը ցանկանայինք, որ յիրաւի պ. Ալէքսանդր Թայիրով կարողանար արդարանալ, մենք ուրախ կը լինէինք, եթէ ամեն մի մարդ կարողանար սրբել իր վրա եղած արատը, լինի դա Թայիրով թէ ուրիշը։

Բայց, տարաբաղդաբար, անցեալ տարիների պատմութիւնը, ամենքի աչքի առջև եղած կենդանի փաստերը, Թայիրովի արարքները և վերջապէս Մանիի դէպքը համարեա բոլորովին ոչնչացնում են այդ յոյսը և բոլորի տեղ տիրապետում է մի ծանր կասկած դէպի պ. Ալէքսանդր Թայիրովի խօսքերը, որը խոստովանելով դառն իրողութիւնը՝ մեղքը գցում է ուրիշի վրա, Ներսէս Թայիրովի վրա։

Անկասկած Ներսէս Թայիրովն էլ հրապարակ կը գայ իրան արդարացնելու համար,—և այն ժամանակ մենք աւելի հիմք կունենանք ապացուցանելու, որ հասարակական կարծիքը և հասարակաց կարծիքի դատաստանը հեշտութեամբ չէ սխալվում....

*

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

«Արձագանքի» մի ըէցէնզիայի (!) առիթով «Մշակի» 131 համարում մեր գրած «Դասագրքեր և հրապարակական ըէկլամ» նկատողութեանը շաբաթաթերթը իր 47 համարում պատասխանեց (?) մի յօդուածով, որը կրում է «Ակամայ դաս ինքնակոչ մանկավարժի» փքուն վերնագիրը։

«Արձագանքի» ըէցէնզիան, ի հարկէ, միմիայն մի կոկած ըէկլամ էր։ Արդ ինչ է այս պատասխանը։—Մի աւելի վատ հիւսուածք, մի ամբաստանութիւն.... մի զեկուցագիր, որի մասին, մեր կարծիքով, աւելի լաւ կը լինէր մասնաւոր նամակ գրել, և ոչ թէ լրագրական յօդուած։

Բայց «Արձագանքում» զեկուցագրեր յօրինողները, ցաւում ենք որ սխալվել են իրանց հաշիւներում։ Սխալվել են, որովհետև եթէ վօլպէրի մասին մենք պնդում ենք, որ սկզբունքով նա չէ կարող իր դասագրքում ոչ ընդունել և ոչ էլ հերքել մայրենի լեզուի միջամտութիւնը՝ այդ նա չէ կարող իր դասագրքում ոչ ընդունել և ոչ էլ հերքել մայրենի լեզուի միջամտութիւնը՝ այդ ամենևին չէ կարող հիմք լինել միամիտ ընթերցողների ականջներին փսփսալու համար, որ իբրև թէ մենք ընդդէմ ենք մայրենի լեզուի օժանդակութեանը։

Իզուր է նոյնպէս «Արձագանքը» մեզ «անպատկառ» համարում մեր համարձակութեան համար, որովհետև, կամենալով բացատրել, թէ ինչպէս կարող էր «Русское Слово»-ի առիթով մի այլանդակ գրութիւն լոյս տեսնել «Արձագանքում», մենք ստիպված էինք ենթադրել, որ կամ դրա պատճառը շաբաթաթերթի գրողների մտաւոր մանկութիւնն է, և կամ դրանց բարոյական տգիտութիւնը։ Մենք հիմք չունէինք դրանց խելքը իրանց սրից աւելի ստոր դասելու և այդպիսով պ. Ղ. Աղայեանից առաջ մատնացոյց արինք այն կապի վրա, որը գոյութիւն ունի «Արձագանքի» և «Կենտրոնական դրամագլխի» մէջ....

Իսկ ինչ վերաբերում է մեր անիշխանականութեանը, մեր «սանձարձակութեանը», այսինքն այն բանին, թէ մենք ընդունել ենք հոգևոր իշխանութիւնից չը հաստատված մի ձեռնարկ, և այդպիսով ինչպէս «Արձագանքն» է ասում, մենք «քանդում ենք այն հիմնարկութեան կանոնները, որին անշեղ կերպով ծառայելու ենք հրաւիրված»,—մենք կը պատասխանենք, որ մեր ընթացիկ գրականական սովորութիւնների վերաբերմամբ ուշադրութեան արժանի այդ հինգ խօսքերը—հէնց իրանք ընդունակ են ամենայն ճշդութեամբ ցոլացնելու դրանց գրողների ներքին արժէքը, և մեզ մնում է միայն ցաւելով յայտնել «Արձագանքի» հրատարակչին հետևեալ ստոյգ տեղեկութիւնը, որի մասին նա, ի հարկէ, տեղեկութիւն չունի, այդ այն է, որ Վ. Օլպէր դեռ օգոստոսի վերջերին էր հոգևոր բարձր իշխանութիւնից հաւանութիւն գտած Երևանեան թեմում գործածութեան համար։

Ի վերջոյ «Արձագանքը», ինչպէս միշտ, չը կամենալով բաւականանալ մի քանի անհեթեթութիւններով, և ուզենալով շատ անհեթեթութիւններ անել, փորձում է մեզ մի բան էլ սովորեցնել։ Նա ասում է. «Թէև Միքայէլեան ուսուցիչ է, բայց չը գիտէ, որ պէտք է «ըէկլամ» և ոչ «ըէկլամ» գրել, ինչպէս աղաւաղել են ռուսները»։ Ծիծաղելի տգիտութիւն։ Թող ներվի մեզ տեղեկացնել ի գիտութիւն շաբաթաթերթի լեզուագէտ (?) խմբագրի, որ ֆրանսիացիները ոչ միայն այդ խօսքը արտասանում են մեր ուզղագրութեան համաձայն, այլ և գրում են réclame, այսինքն accent aigu նշանով, որը պահպանվում է մի և նոյն արմատից ածանցեալ խօսքերում անգամ։ Հետևաբար թէ մենք, որ հայերէն գրում ենք «ըէկլամ», և թէ ռուսները, որոնք գրում են реклама, ճշդութիւնից մաղի չափ անգամ չեն հեռանում, քանի որ réclame=реклама=ըէկլամ, և միայն «Արձագանքի» լեզուագէտներն են, որ այդքան յանդուգն ոճով խօսում են այն բանի վրա, որը չը գիտեն։

Բայց թողնենք «խմբագրի» սխալը ուղղելու գործը.... Բաւական է։ «Արձագանքի» այն մանկավարժների հետ, որոնք կարողացան երկու դասագրքերի համեմատական արժանաւորութիւնների հարցը վերափոխել «զեկուցագրերի» և «ամբաստանութիւնների» անկարելի է աւելի խօսել, ինչպէս անկարելի է «զիսպուտների» միջոցով «առաքինութիւն» ներշնչել «գայլաձկներին» (տես Շչեդրին)։

Գ. Միքայէլեան

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Դեկտեմբերի 1-ին

Միշտ նկատված է, որ ոգէտ հասարակութիւնը միայն այն ժամանակ է մաքառում խոչնդոտների դէմ, երբ «դանակը ոսկորին է հասնում»։ Այդպիսի դէպքերից մէկը աչքներիս առջև է։

Սուրմալու գաւառի մի քանի գիւղերի հողը պղպաբեր չէ, որը վերջին յուսահատութեան է հասցնում գիւղացիներին։ Նրանք չը գիտեն թէ ինչ միջոցի դիմեն իրանց հողերը պարարտացնելու, որ կարողանան ապրել։

Արաքսի աջ ափից սկսած դէպի Բարդողեան լեռնաշղթան տանող ճանապարհի մօտերքում կայ ահագին տարածութեամբ անմշակ աչքաթող արած հող. ւնցնում ես գիւղերի դաշտերովը, աչքդ է ընկնում փոքր տարածութեամբ բերրի երկպատիկ, եռապատիկ աւելի անպէտք «չոռաքեաթ» (աղի) հող. շատ անգամ, մանաւանդ գարնանը, այդ «չոռաքեաթ» կոչված տարածութեան վրա նստում է բաւական հաստ շերտ աղ, որ կարելի է տասնեակ պուդերով ժողովել։ Այս աղը փոքր ինչ անախորժ, բայց սովորական աղի համն ունի (միայն ուտելիքի համար չէ գործածվում)։

Ներկայումս այս «չոռաքեաթ» հողերի վրա ուշադրութիւն չեն դարձնում, որովհետև նախ՝ գիւղացին իր ունեցած քիչ հողով «մի կերպ» ապրում է, և երկրորդ, այդ հողերը բերրիացնելու համար բաւական ժամանակ կը պահանջվի։

Բլուր գիւղը, Իգդիրից 4 վերստ դէպի հիւսիս-արևմուտք, որ բաղկացած է մօտ 250 ծուխից, 10—15 տարի առաջ վերջին յուսահատութեան էր հասել, որովհետև նրա վարելահողերը անպտղաբեր, մասամբ էլ «չոռաքեաթ» էին։ Ցանածից մէկին 2—3 հաղիւ էին ստանում և այն էլ ամեն տարի նոյն հողը չէր կարելի ցանել, այլ գոնէ մէկ կամ երկու տարի պէտք է մնար առանց ցանելու, որ ոյժ ստանար։ Բլուրցիները այն աստիճան յուսահատված են եղել, որ մտածել են թողնել գիւղը, հեռանալ մի ուրիշ տեղ։

Այսպիսի տնտեսական ճգնաժամին օգնութեան է հասնում մի տեղացի ծերունի—Այվազ Յովհաննիսեան, որ իր նորագիւտ հնարով բաւական օգնում է հողի բերրիանալուն։

Ծերունին, որ այժմ մօտ 50 տարեկան ծեր մարդ է, որպէս հողագործ լաւ ուսումնասիրած է իրանց գիւղի հողը իր բոլոր մանրամասնութիւններով. մինչև անգամ շատերը հաւատացնում են, որ նա հողը ձեռքն առնելով կիմանայ թէ ինչ աստիճանի բերրի է։ Մի փոքր էլ կարդացած մարդ է, օրինակ գիտէ որ Նեղոսի ափերը պղպաբեր են, որովհետև ամեն տարի տղմով են ծածկվում, իմացել է նոյնպէս որ այն հողերը շատ պղպաբեր կը լինեն, որոնք աւելի շատ են պարունակում իրանց մէջ բուսական և կենդանական փտած մարմիններ։

«Այվազ Ամին» մտածում է ջուր բաց թողնելով դաշտերի վրա, արուեստական կերպով փոխադրել այնտեղի բուսական մասերը։ Փորձը նա անում է իր հողի մի կտորի վրա. ուշանը հողի շուրջը թումբ կապելով՝ ջուրը լճացնում է նրա վրա, իսկ գարնանը ցանում է բամբակ և ստանում է աւելի քան առաջ էր ստանում։ Երկրորդ անգամ ջուրը լճացնում է արտի վրա հունձից յետոյ, իսկ աշնանը ցանում է ցորեն և, ի զարմանս ամենքի, ստանում է փոխանակ մէկին 3, մէկին 8։ Այս լուրը տարածվում է ամբողջ գիւղի մէջ. ամենքը հետաքրքրվում են նոր գիւտով և այնքան խելօք են լինում, որ կարողանում են Այվազ ամիի գիւտից օգտվել։ Այնուհետև գիւղացիք սկսում են նոր եռանդով պարարտացնել հողը և վարելու ժամանակն էլ մոխիր ու անասունների աղբ խառնելով՝ պատրաստել մի յարմար ցանելու գետին։

Այսպէս ուրեմն, այն հողերը, որոնք մէկ տարի ցանվում, իսկ երկու տարի «խամ» էին թողնվում, այժմ ցանվում են ամեն տարի և մէկին 7—8 արդիւնք են տալիս. տեսէք թէ Այվազ «ամիի» մի հասարակ փորձը որքան օգուտ է տուել գիւղացիներին։ «Այվազ ամիի» գիւտից օգտվում են չրջակայ մի քանի գիւղեր, և աշնան վերջերին անցնելով գիւղացոց արտերի մօտով, կը տեսնէք ամբողջապէս պատած են ջրով։

Մի քանի խօսք էլ այստեղի հողի բնաւորութեան մասին։

Ամեն տարի մի և նոյն բոյսը նոյն հողի վրա չէ կարելի ցանել, պէտք է փոփոխել.—եթէ այս տարի ցորեն է ցանվել, գալ տարի պէտք է բամբակ, քնջիթ, կանեփ և այլն ցանել և ոչ թէ ցորեն։ Սուրմալուի դաշտային մասում ցորենը լինում է միշտ աշնանացան, որովհետև հողերը ջրովի են։ Ցանած հողի վրա ջուր չեն լճացնում, այլ սպասում են հունձի վերջանալուն։

Մեր խօսքերից երևում է, որ «դանակը ոսկորին հասած» ժամանակ գիւղացին կարող է մասամբ իր գլխի ճարը տեսնել, բայց ահագին չարչարանքներով. սակայն աւելի հեշտ միջոցներով և կարճ ժամանակում նոյն նպատակին հասնելու համար զգացվում է նոյն հարցին վերաբերող գիտութեան առաջնորդութիւնը կամ, ուրիշ խօսքով, գիւղացուն օգնութեան պէտք է հասնի թէ փորձնական և թէ տեսական գիւղատնտեսութեան հմուտ մասնագէտը, և եթէ այդ չի աջողվի, գոնէ այդպիսիները հրատարակէին ժողովրդին հասկանալի լեզուով գրքեր, որ ինքն—գիւղացին ձեռնուվայ երեք պարապ ամիսների ընթացքում կարողանար օգտվել։

Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ Պետերբուրգից, դեկտեմբերի 11-ից, որ հրատարակված է ֆինանսների մինիստրութեան կարգադրութիւնը՝ չրջանառութիւնից հանելու 15 միլիոն գումարի թղթադրամներ, որոնք ապահովված են պետական գանձարանի ոսկով։

—

«Новое Обозрѣніе» լրագիրը տպել է իր վերջին համարներից մինում Երևանցի Ալէքսանդր Նիկիտիչի Թայիրովի հերքումը Մանիի մահվան առիթով տեղական մամուլի կողմից իր դէմ ուղղված յարձակմունքների վերաբերմամբ։ Պ. Թայիրով յայտնում է որ ինքն չէր ուզում նեղացնել Մանիին, հրաման էր տուել իր հօրեղբօր որդուն, Ներսէս Թայիրովին դադարեցնել Մանիի դէմ պահանջը, քանի որ գիտէր թէ հանգուցեալից այս բոպէիս ոչինչ չէր էլ կարող ստանալ և իր շահը կը պահանջէր, ընդհակառակն, որ պարտատէրը նախ ուզղէր իր գործերը, որպէս զի միջոց ունենար իր պարտքը փոքր առ փոքր վճարելու,—բայց Ներսէս Թայիրով չը կատարեց այդ հրամանը և շարունակեց ճնշել Մանիին, որով և հասցրեց նրան յուսահատական քայլին։ Ալէքսանդր Թայիրով ինքն սասսիկ հիւանդ լինելով, չէր էլ կարող անձամբ իր գործերը վարել, այլ յանձնել էր իր այդ գործերը Ներսէս Թայիրովին, իսկ սա, ինչպէս երևում է հիւանդի բացատրութիւնից, անձնական վրէժխնդրութեան զգացմունք ունէր Մանիի դէմ։

—

Նուխու գաւառի ԵԱՂՈՒԲԼՈՒ գիւղից մեր թղթակիցը մեզ գրում է հետևեալը։ «Այս տարի իսկապէս աշուն չը տեսանք. ձմեռվայ օրերը շուտ վրա հասնելով, ինչպէս Նուխու վիճակի բոլոր գիւղացիները, այնպէս և եաղուբլուեցիները, պէտք է ասած, կրիտիկական և անտանելի դրութեան մէջ են գտնվում այսօր։ Ամբողջ հոկտեմբեր ամիսը, որ գիւղացու վարի եռ եկող ժամա-

նակը պիտի լինէր, երաշտ անցնելով, չատերը վարից զրկվեցան։ Նոյեմբերն էլ հէնց սկզբից իր ձմեռվայ օրերով, իր պարբերաբար անձրևախառն ձիւնով և փոփոխական եղանակներով, միանգամայն անկարելի էր դարձնում գիւղացուն դաշտ դուրս գնալ։ Բայց ընութեան այդ խաղով էլ չը վերջացաւ եաղուբլուեցու անաջողութիւնը. դրա վրա աւելացրէք մի երկրորդ և գիւղացուն լաց ու կսկիծ պատճառող աւելի մեծ չարիք ևս,—այդ կենդանիների հիւանդութիւնն է։ Այսօր տուն չէ գտնվում Եաղուբլուեում, որը մէկից սկսած մինչև տասը գլուխ տաւար չը լինի զոհած այդ հիւանդութեան։ Առհասարակ այդ հիւանդութեան արագութեամբ տարածվելու գլխաւոր պատճառը, պէտք է ասած, մի կողմից էլ հէնց իրանք՝ գիւղացիներն են։ Սրանք սատկած կենդանին հողի տակով անելու սովորութիւն չունեն, այլ անխնամ գիւղի մօտակայ ձորերից մէկի մէջ գլորելով են բաւականանում, ուր և սատկած կենդանին նեխվելով, ապականում, է օդը, որով և պատճառ դառնում հիւանդութեան աւելի ևս տարածվելուն։ Ինչպէս յայտնի է, առհասարակ մեր բոլոր գիւղացիները իրանց կենդանիներին մի գոմում են պահում, ուր շատ տեղերում ապրում են մինչև անգամ և իրանք գիւղացիները։ Հիւանդութիւնը կենդանիներից մէկին բռնելով, ինչ ասել կուզէ, որ պէտք է անպատճառ վարակէ և միւսին։ Իսկ մեր գիւղացին փոխանակ օր առաջ հիւանդ կենդանուն միւսներից զատելու, չարունակում է իր խելքը կորած մի քանի բժշկութիւններն անելով, նոյն գոմում պահել։ Ի վերջոյ, եթէ վերջին ժամանակներս օրից օր սաստկացող գողութիւններն էլ յիշենք, մեր գիւղացիների գլխին եկած չարիքը կատարեալ կը լինի։ Այս առիթով գիւղացիների բողոքը, պէտք է ասած, առանց հետևանքի չը մնաց։ Ահա մի չաբաթից աւելի է, ինչ որ վիճակիս պրիստավը ամեն գիւղից «թանգչիներ» դուրս բերելով իր հետ, շրջում է շրջակայ սարերն ու անտառները գողերին ձերբակալելու նպատակով, բայց ինչպէս ասում են, պրիստավին դեռ չէ աջողվել գողերին բռնելու։»

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետևեալը։ «Մեր կալուածատէր աղաներից ոմանք հիմնովին քերթում են իրանց չէնքերի մէջ բնակվողների կաշիները։ Տան կամ խանութների վարձը սարսափելի թանգ է։ Առաւօտից մինչև կէս գիշեր ապրիւն-քրտինք թափող արհեստաւորի, մթերավաճառի, մշակի և կամ վաճառականի դառն աշխատանքի շատ մասը՝ մտնում է յիշեալ աղաների գրպանները։ Եւ շատ անգամ էլ այդ վաշխառու աղաները, իրանց յատուկ տմարդութեամբ պահանջում և ստանում են այն մեծաքանակ տուգանքները, որ ստիպված են վճարել կենողները մի քանի օրերով մոռացած լինելով վճարել իրանց բնակարանի վարձը։ Առնում են տուգանք և դրանով չեն կշտանում այդ անյագ աղրուկները, այլ իւրացնում են սենեակի կամ խանութի մէջ գտնվող բոլոր կահկարասիքը, որոնք այդ կենողների կամ խանութպանների սեփականութիւնն են, բացի այդ և բարբարոսաբար վանդում են նրանց իրանց բնակարանից։ Սենեակ վարձողները դեռ էլի մի կերպ իրանց «դլխի ճարը» տեսնում են. բայց ինչ դրութեան մէջ է լինում խանութպանը, ինչ է լինում նիսիա առնող խանութպանների հաշիվը, որոնք իրանց բայօնի մուշտարիներից զրկվում են։ Նիսիա առուծախ անող խանութպանին վանդել իր մշտանիստ խանութից մի և նոյն է, որ ձուկը ջրից հանել։ Այդ կը նշանակէ նրա բազմաթիւ ընտանիքի համար ծովը նետվել։»

—

Հեռագիրը մեզ լուր բերեց, որ դեկտեմբերի 13-ին, Ֆրանսիայի Նիցցա քաղաքում վախճանվեց կոմս Միքայէլ Լորիս-Մելիքով։ Պէտք է ասել, որ կոմսի մահը շատ էլ անսպասելի չէ կարող համարվել, քանի որ նա, վերջին ժամանակներս, ենթարկված էր ծանր և երկարատև հիւանդութեան, և միշտ ստացվում էին վատահամբաւ լուրեր նրա առողջութեան մասին։ Լորիս-Մելիքով վաղուց ի վեր յայտնի է ոչ թէ միայն ամբողջ Ռուսաստանում, այլ և ամբողջ Եւրոպայում, իր վարած նշանաւոր պաշտօններով և կատարած դերով, մանաւանդ 1878—1881 թուականներում։ Վերջին ռուս-թրքական պատերազմում ամենաառաջին դերերից մէկը կատարելուց յետոյ, Լորիս-Մելիքով Պետերբուրգ գնաց և նշանակվեց բարձրագոյն յանձնաժողովի կառավարիչ, իսկ դրանից յետոյ ներքին գործերի մինիստր։ Լորիս-Մելիքովի նախնիքը Լորու գաւառիցն են. նա ծնվել է 1825 թ-ին, և իր մանկութիւնը անց է կացրել Թիֆլիսում, ուր հէնց այժմ բնակվում է կոմսի պառաւ մայրը։ Նա իր ուսումը աւարտել է լունկերների դպրոցում։ Հաղորդելով այս անգամ այդ մի քանի՝ ընդհանուր տեղեկութիւնները, մենք միւս անգամ կը հաղորդենք հանդուցեալ կոմսի վերաբերմամբ կենսագրական մանրամասն տեղեկութիւններ։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ դեկտեմբերի 17-ին Բագու քաղաքի Թաղիեվի թատրոնում տեղի կունենայ Կարա-Մուրզայի երգեցիկ խմբի կոնցերտը, որի պրոգրամը բաւական հետաքրքիր է։

—

Դեկտեմբերի 27-ին կովկասեան կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կորսակովի պալատում լինելու է պարահանդէս։

—

ՂԶԼԱՐԻՑ, դեկտեմբերի 13-ից, ստացանք մեր թղթակցից հետևեալ տխրալի հեռագիրը «Թերէք գետը պատռեց պատնէշը, քաղաքի և այգիների մի մասը ջրի տակն են, մի և նոյն ժամանակ ցուրտը հասնում է 15 աստիճանի։ Աղէտը սարսափելի է։»

—

Մի քանի օր սրանից առաջ, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, Կուկիայում, մի գինետան մէջ, 70 տարեկան մի ծերունի, Բուրչիեվ ազգանունով, դաշոյնով սպանեց երկաթուղու արհեստանոցում բանող երկու բանուորներին՝ Տիգրան Սարգսեանին և Պետոր Կուչերենկոյին։ Այս սարսափելի սպանութեան պատճառը այն է, որ վերջինները պարտ են եղել Բուրչիեվին մի քանի ռուբլի։ Սպանվածները ունեն ընտանիք և որդիք, որոնք մնացել են առանց ապրուստի միջոցների։

—

Կանանց բարձրագոյն կրթութեան համար մշակված ծրագիրը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, շատ շուտով ընթացք կը ստանայ և մօտիկ ապագայում կը որոշվի այդ հարցի աջող կամ անաջող վախճանը։

—

Դեկտեմբերի 12-ին, ռուսաց դրամատիական խումբը յօգուտ տիկին Դանիլովայի ներկայացրեց «Нищіе духомъ» յայտնի պիէսան։ Դժբաղդաբար թատրոնում շատ քիչ հասարակութիւն կար, թէև տ. Դանիլովա իրրև լաւ դերասանուհի՝ արժանի էր աւելի մեծ համակրութեան։ Պիէսան ներկայացվեց բաւական աջողութեամբ։ Տ. Դանիլովա ստացաւ բաւական ընծաներ։ Յաջորդ օրը, դեկտեմբերի 13-ին, նոյն խումբը յօգուտ բանտերի մասին հոդացող կանանց մասնաժողովի ներկայացրեց Տուրգենևի «Երեկոյ Սօրէնտսոյում» և «Հօրեղբօր բնակարանը» ծիծաղաշարժ կատակերգութիւնը։ Թատրոնը համարեա թէ լի էր, և հասարակութիւնը շատ զուարճացաւ վերջին կատակերգութեան շնորհով։ Երեկոյեան մի քանի ժամեր ծիծաղել և զուարճանալ ցանկացողներին խորհուրդ ենք տալիս թատրոն գնալ և տեսնել այդ կատակերգութիւնը։ Նոյն օրը օպէրային թատրոնում ներկայացվեց «Եվգէնիյ Օնէգին» օպերան, յօգուտ Մանիի ընտանիքի. ներկայացումից դոյացած արդիւնքը, ինչպէս իմացանք, բաւական լաւ է։

—

Այս օրերս Թիֆլիսում լոյս տեսաւ «Անդրկովկասեան արքունական գիւղացիների ուսումնասիրութեան նիւթերի ժողովածուի» չորրորդ հատորը։ Այդ հատորի մէջ զետեղված են հետևեալ աշխատութիւնները. 1) Անդրկովկասեան երկրի արքունական գիւղացիների երկրագործութիւնը, Ֆ. Վերմիշեանի. 2) Այգեգործութիւնը Անդրկովկասում, Ս. Զելինսկու, 3) Շերամապահութիւնը Անդրկովկասում, Ն. Շավրովի, 4) Անդրկովկասի մեղուապահութիւնը, Ն. Շավրովի և 5) Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում, Յ. Խատիսեանի։ Այդ աշխատութիւնների ժողովածուն, որը մի բաւական մեծ գիրք է կազմում, պարունակում է հետաքրքիր տեղեկութիւններ և արժանի է ուշադրութեան։

—

Դեկտեմբերի 13-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական բաժնում քննվեց տեղական «Новое Обозрѣніе» լրագրի խմբագիր Ռուսպէնսկու գործը. նա մեղադրվում է մի այսպիսի յօդուած տպելու համար, որից վիրաւորված է եղել Աղնախի այժմեան գաւառապետ Ալէքսէեվ-Մէսխիեվ։ Պալատը արդարացրեց պ. Ռուսպէնսկուն։

—

Վրաց թատրոնասէր երիտասարդութիւնը վերջին ժամանակներս կազմակերպել է մի ազգային երգեցիկ խումբ, որին մասնակցում են բաւական անձինք։ Խումբը ոչ թէ միայն երգում է վրաց ազգային երգեր, այլ և սովորում է ածել տեղական գործիքների վրա, ինչպէս են թառ, դայիրա, սազ, դիմպլիպիտօ և այլն։ Խմբի կառավարիչն է պարոն Ագնիաշվիլի։ Խումբը մտադրութիւն ունի մեծ պասին կոնցէրտներ տալու, իսկ վրաց թատրոնական խումբը չատով մի ներկայացում պիտի տայ յօգուտ այդ խմբի։

—

Ստացանք Վիէննայում հրատարակվող «Հանդէս Ամսօրեայի» այս տարվայ վերջին, դեկտեմբերի տետրակը։ Աչքի անցնելով այդ հրատարակութեան ամբողջ տարվայ համարները, չենք կարող չը նկատել, որ «Հանդէս Ամսօրեան» սկզբից լաւ յոյս էր տալիս, նրա սկզբի համարները համեմատաբար բաւական լաւ էին կազմված, բայց վերջին համարները ընդհանրապէս բովանդակութեան կողմից մի առանձին բան չէին ներկայացնում։ Աւելի աջողութիւն ենք ցանկանում այդ հանդեսին։

—

Վրաց գրական գործիչները վերջին ժամանակներս մի առանձին ուշադրութիւն են դարձրել ժողովրդական ամենամատչելի և ամենաէժան գրքոյկներ հրատարակելու գործի վրա։ Հրատարակվել են և հրատարակվում են մեծ քանակութեամբ ժողովրդական ընթերցանութեան գրքոյկներ, և աջողութեամբ տարածվում են ժողովրդի մէջ, որին ընդհանրապէս լաւ ծանօթ է վրաց լեզուն։

—

Ռուսաց «Кіевское Слово» լրագրի ֆելիետոնիստը քննութեան ենթարկելով Կիէվի նահանգի ամուսնութեան վիճակագրութիւնը, այն եզրակացութեանն է գալիս, որ 12 տարուց յետոյ այդ նահանգում այլ ևս ամուսնութիւն չի լինի։ Անցեալ տարի Կիէվի նահանգում եղել է 22,191 ամուսնութիւն. համեմատելով նախորդ տարիների հետ, ամուսնութիւնների թիւը մի տարում պակասել է 2,098-ով։ Եւ եթէ այնչ փոփոխութիւն չը պատահի, ասում է լրագրի ֆելիետոնիստը, և ամեն բան առաջվայ նման շարունակվի, այն ժամանակ 12 տարուց յետոյ այդ նահանգում մի հատ ամուսնութիւն չի լինի։ Այդ բանը կը լինի 1901 թ-ականին, և այդպիսով 20-որդ դարը կը սկսվի ամուսնութեան կատարեալ բացակայութեամբ.... Սրամտութիւնը, ի հարկէ, միայն սրամտութիւն է, բայց փաստն էլ փաստ է, որ ամուսնութեան պրոցէսը շատ նըւազում է, ոչ թէ միայն Կիէվի նահանգում, այլ առհասարակ ամեն տեղ։

—

Վրաց երիտասարդութիւնը պատրաստութիւններ է տեսնում եղել տօնելու Գաբրիէլ Սունդուկեանի 25-ամեակը ոչ թէ միայն Թիֆլիսում, այլ և Գորում, Քութայիսում և առհասարակ ուրիշ վրացաբնակ քաղաքներում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՕԼՍԻՑ

—

Կ. Պօլսի Միացեալ ընկերութեան վարչութիւնը Կ. Պօլսի հայոց լրագիրներում հրատարակել է հետևեալը. «Բերկրութեամբ սրտի կը ծանուցանենք թէ մեծահռչակ նկարիչ Յովհաննէս Այվազովսքի չնորհ ըրած է ընկերութեանս նուիրել այս անգամ երկու մեծադիր նկարներ որք շուրջ 10,000 ֆրանքի նիւթական արժողութիւն ունին։

Այս առաջին անդամը չէ որ մեծանուն նկարիչն այսպիսի զեղեցիկ նուէր մը կընէ Ընկերութեանս, ըստ որում հիանալի և մեծարժէք ծովանկար մը չնորհած է արդէն ասկից յառաջ։ Ուստի և ցնորէն ժողովս, որ արդէն նախորդ նուիրատուութեանն առթիւ Ընկերութեանս Պատուոյ անդամ կարգած էր Պ. Յովհաննէս Այվազովսքի, այս անգամ ևս հանդիսաւոր դումարման մը մէջ միաձայնութեամբ որոշած է ի նշան երախտագիտութեան Հայոց Միացեալ Ընկերութեանց ԲԱՐԵՐԱՐ հռչակել մշանջենապէս զմեծանուն Նկարիչն, որ լիովին և աւելեօքն իսկ լրացուցած է մեր Հիմն. Կանոնագրի այն տրամադրութիւնն, որ բարերարի մ՝ընտրութեան համար 500 օսմ. ոսկւոյ նուիրատուութիւն մը պայման կը դնէ անհրաժեշտ։ Այս կերպիւ երեք բարերարներ կ՝ունենայ ցարդ Ընկերութիւնս, որոնց երկուքը վախճանած են դժբաղդաբար, այն է երջանկայիշատակ Գէորգ Կարապետիկոս ու յաւէտ ողբացեալն Ներսէս Պատրիարք. իսկ երրորդը մեր մեծանուն Նկարիչն է։»

Թորոնի պատրիարքին դիպլոմատիական այցելութիւնների մասին Կ. Պոլսի լրագիրները հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում։

Ս. Պատրիարք Հայրն դեկտեմբերի 1-ին պարսկական դեսպանատունը գնաց ի փոխադարձ այցելութիւն։ Պատրիարք Հայրը դեսպանի հետ քսան վայրկեանի չափ տեսակցելէ յետոյ վերադարձաւ ի Պատրիարքարան։

Ռուսական դեսպան Պ. Նելիտոֆ իւր հետն ունենալով առաջին թարգման Պ. Իվանոֆ դեկտեմբերի 1-ին Ազգ. Պատրիարքարան եկաւ ի փոխադարձ այցելութիւն։ Պ. Նելիտոֆ և Պ. Իվանոֆ Ն. Սրբազնութեան հետ կէս ժամու չափ տեսակցելէ յետոյ մեկնեցան։

Ֆրանսիական դեսպանատան գործակատար Պ. Էմպէռ՝ ընկերակցութեամբ առաջին թարգման Պ. Ռոպէռի՝ Ազգ. Պատրիարքարան եկաւ ի փոխադարձ այցելութիւն և քսան վայրկենի չափ տեսակցեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ։

Աւստրիական դեսպան Պառոն տը Քալիչէ՝ ընկերակցութեամբ առաջին թարգման Պ. տը Գալի, Ազգ. Պատրիարքարան եկաւ ի փոխադարձ այցելութիւն և քառորդ ժամու մը չափ տեսակցեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ։

Գերմանական դեսպան Պառոն տը Բատովիձ ևս, ընկերակցութեամբ իւր առաջին թարգմանին, Պատրիարքարան գալով ի փոխադարձ այցելութիւն, քսան վայրկեանի չափ տեսակցեցաւ Ամենս. Ս. Պատրիարք Հօր հետ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Իտալական մինիստր-նախագահ Կրիսպի, ուղարկել է նորերս արտասահմանի իտալական ներկայացուցիչներին շրջաբերականներ, որոնց մէջ խօսում է այն լուրերի առիթով, որոնք վերաբերում են պապի աշխարհային իրաւունքները վերականգնեցնելուն և յայտնում է, թէ իտալական կառավարութեան համար այդ լուրերը անախորժ են հիմնովին և դրանք հիմք էլ չունեն։

—Ֆրանսիական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի սենատին ներկայացնել մի առաջադրութիւն՝ Պանամայի ընկերութիւնը մնանկութիւնից ազատելու համար։ Եթէ սենատը ընդունի այդ առաջադրութիւնը, յոյս ունեն որ դրանից յետոյ չէր մերժի նրան ընդունել և պատգամաւորների ժողովը։

—Գերմանական կիսապաշտօնական մամուլի մէջ ցանկութիւններ են յայտնվում Պանամայի ընկերութեանը միջազգային օգնութիւն ցոյց տալու համար։

—Սերբիայից եկած լուրերին նայելով, արմատականները և ազատամիտները վճռել են միանալ և միասին գործել սկուպշչինայում։ Յոյս ունեն, որ եթէ արմատականները և ազատամիտները կը միանան և կաղդեն կառավարչական գործերի վրա, այն ժամանակ կարելի կը լինի փոքրացնել ժողովրդի հարկերը և կարգի բերել ներքին գործերը։

—Բուլգարական ազգային ժողովը ցաւակցութիւն է յայտնել Ալէքսանդր Բատենբերգին՝ Ալէքսանդր Հեսենացու մահուան առիթով։ Ազգային ժողովի մէջ այդ մասին խօսք եղած ժամանակ ահագին և աղմկալի վիճաբանութիւններ եղան։

—Բուլգարական կառավարութիւնը ազգային ժողովին ներկայացրել է մի օրինագիծ՝ Սոֆիայում համալսարան բանալու մասին։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոր տարվայ օրը տեսանելի պէտք է լինի Ամերիկայում արեգակի կատարեալ խաւարումն։ Շատ հազւագիւտ բան է, որ արեգակի խաւարումն պատահէր նոր տարվայ առաջին օրը, այնպէս որ տարին սկսվէր արեգակի խաւարումով։ Դա պատահել է, ինչպէս յայտնի է, միայն 1612 թ-ին և աստղաբաշխների հաշիվով դարձեալ պիտի տեղի ունենայ միմիայն 2161 թ-ին։

*
* *

Բորդէնի 5 հազար ֆրանկ դումարի պրէմիան (մրցանակը) ստացաւ իր մաթեմատիկական գրուածքի համար մի ռուս կին, տիկին Կովալեվսկայա, որը մաթեմատիկայի պրոֆէսոր է Շվէդիայի Ստոկհոլմ քաղաքի համալսարանում։

* * *

Գերմանացի երևելի վիպագրող Էբէրս, «Եգիպտոսի թագաւորի աղջիկը»՝ «Ուարդի» և այլ romanների հեղինակը, գրել է մի նոր roman «Die Gred» վերնագրով. այդ romanը այս օրերս լոյս է տեսել Շտուտգարտում։

* * *

Այս օրերս Վարշավայի խոհարարուհիները, աղախինները և «գեղեցիկ սեռին» պատկանող բոլոր տեսակ սպասաւորները, դիմելով տեղացի մի փաստաբանին, խնդրել են նրան գրել մի խնդիրք, ոլորէս զի իրանց թոյլ տրվի բանալ «կլուբ» կինսպասաւորների համար։

* * *

Բերլինի պալատական շրջաններում լուր է տարածված, որ այրի կայսրուհին, Աւգուստա, մտադրվել է կաթոլիկութիւն ընդունել.... Թէ ինչն է առիթ տալիս այրիացած կայսրուհուն իր կեանքի վերջին տարիներում կրօնափոխութեան դիմելու,—յայտնի չէ։

* * *

Փարիզում, 1889 թվի ցուցահանդիսի ժամանակ, պէտք է գումարվի և բանուորների միջազգային կոնգրէս։ Այդ կոնգրէսում պիտի մշակվի բանուորական աշխատանքին վերաբերեալ կանոնների մի նախագիծ։

* * *

Լոնդոնում այս օրերս մի հետաքրքիր փորձ տեղի ունեցաւ. ճեպակառքը (omnibus) առաջ էր գնում սովորական փողոցով առանց ձիերի,—այլ էլէկտրականութեամբ։ Զը կային նոյն իսկ ռէլսներ, և էլէկտրականութեամբ առաջ գնացող ճեպակառքը աւելի արագ էր ընթանում, քան թէ ձիերով շարժվող որ և է կառք։

* * *

Իտալացի դիտնական Գօզի ներկայացրել է ֆրանսիական գիտութիւնների ճեմարանին մի ծանուցում, որով յայտնում է, որ մանրադէտը հնարել է Գալիլէյ 1616 թվին, և ճիշդ չէ որ այդ գիւտը վերագրվում է հոլլանդացի Կորնել Դրեբբէլին։

* * *

«Սիրոյ հարցով» ներկայումս զբաղված են շատ ֆրանսիացի, անգլիացի և գերմանացի դիտնականներ, և վերջին ժամանակներս շատ գրքեր վերաբերվում են «սիրոյ հարցին»։ Այս օրերս Բերլինում լոյս տեսաւ մի նշանաւոր գիրք, որը վերաբերվում է «սիրոյ հոգեբանութեանը»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՕՐԵԼ, 12 դեկտեմբերի։ Երդուեալները արդարացրին այն բոլոր անձանց, որոնք դատվում էին Բրեանսկի փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ կատարած զեղծումների համար։

ՍՕՖԻԱ, 12 դեկտեմբերի։ Նաչեվիչ և Ստոիլով մինիստրները հրաժարական տուին, Ստամբուլովի հետ կուած լինելու պատճառով։ Նրանց փոխարինեցին Ստալբաչեվ և Ցոնչեվ։

ՋԱՆԶԻԲԱՐ, 12 դեկտեմբերի։ Գերմանական նաւը ձերբակալեց մի նաւ, որի վրա գտնվում էին գերիներ. 140 գերի ազատվեցան. շատ արաբներ գերված են. ազատվածների համար հատատում է միսիոներական հիմնարկութիւն։

ԼՕՆԴՈՆ, 12 դեկտեմբերի։ Պարլամենտը փակվեց դահլիճ ճառով, որի մէջ խօսվում է Հիւսիսային Ամերիկայի նահանգների հետ ունեցած անաջող բանակցութիւնների մասին, ձկնորսութեան վերաբերութեամբ, Գերմանիայի հետ միահամուռ գործունէութեան մասին՝ գերեվաճառութիւնը դադարեցնելու վերաբերութեամբ, և անելով եգիպտական անցքերի տեսութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ Ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ Գիրս նշանակված է աւտարանական-բողոքական գլխաւոր կոնսիստորիայի նախագահ։ Թիֆլիսի փոխ-նահանգապետ իշխան Շերվաշիձէ նշանակված է Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատար։

ՆԻՑՑԱ, 13 դեկտեմբերի։ Կոմս Լորիս-Մելիքով վախճանվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի։ Սենատը վճռեց բժշկապետ Դրէյպէլիէրի գործը յանձնել Պետերբուրգի նահանգական դատարանին նոր վճիռ կայացնելու համար։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 13-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. .	96	ք. 75	›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	47	› 35	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	38	› 20	›
Ոսկի — արժէ — . .	7	› 71	›
Մաքսային կուպոններ — . .	155	› 75	›
Արծաթ — — . — . . .	1	› 17	›
Բորսային դիսկոնտներ — . .	6⅞ և 7¾%		›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	› —	›
— — — — 2-րդ —	97	› 75	›
— — — — 3-րդ —	97	› 50	›
— — — — 4-րդ —	97	› 50	›
— — — — 5-րդ —	97	› 75	›
— — — — 6-րդ —	133	› 25	›
Նոր 4% փոխառութիւն.	81	› 75	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98	› —	›
— — 2-րդ —	98	› —	›
— — 3-րդ —	97	› 50	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	272	› 25	›
— երկրորդ —	246	› 75	›
5½% բէնտա	102	› 50	›
Ոսկեայ բէնտա.	175	› —	›
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն.	149	› 25	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	97	› 75	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	—	› —	›
— — թղթադ. .	98	› 25	›
Գրաւ. թղ. Ազնս. բանկի . . .	98	› —	›
5½% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	97	› 12	›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	99	› 75	›
— — Պոլտավայի —	— 100	› 50	›
— — Պետ.Տուլսկ.—	— 99	› 75	›
— — Կիևվի —	— 101	› 50	›
— — Մոսկվայի —	— 101	› —	›
— — Բեսարաբ. Տամբ.—	99	› 75	›
— — Նիժ. Սամար. —	100	› —	›
— — Վիլնայի —	99	› —	›
— — Թիֆլիսի—72 և — տ.	—	› —	›
— —Քութայիսի-18 և — տ.	—	› —	›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	692	› —	›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	242	› —	›
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	85	› 75	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	92	› 50	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	91	› 75	›
Օդեսայի — — .	92	› 87	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	—	› —	›

Ս. Պետերբուրգի բորսայի արամագրութիւնը շատ ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական, նաև ատամնացաւի, սիֆիլիսի և աչքի ց.

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.

ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։

ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիւրակի կանանց ց.

ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—4½—5½ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—5½—6½ ժ.

ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա)։

Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մոզեր։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Дворцовая улица, КАРАВАНСАРАЙ БЫВШ. АРЦРУНИ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Դվորցովայա փողոցում, նախկին Արծրունի քարվանսարայում

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ

ԲՐԴԵԱՑ ՎԵՐՄԱԿՆԵՐ *ամենաէժան գներից մինչև ամենաթանգ գները։*

ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՑ

1—10 (Հ)

Շաբաթ, 17-ին դեկտեմբերի, ԲԱԳՈՒԻ *թաղիեվի թատրոնում կը լինի խմբական* ՀԱՄԵՐԳ *կարա-Մուրզայի։* 1—1

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԷՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ*

Ուրբաթ, 23 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ *դուրս կը գնայ շոգենաւ* CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) *նաւապետ* PAUL (ՊՕԼ), *մտնելով Կ. Պօլիս, Պօրտ-Լահօր և Լակավայ։*

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ *պ. Գ. Էսսէնճէր, իսկ* ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։ 1—2

ГАЗЕТА А. ГАТЦУКА

(ИЗДАЮЩАЯСЪ СЪ 1875 ГОДА)

Единственная въ Россіи политико-литературная иллюстрированная газета, послѣ пріостановки ея изданія, по распоряженію г. министра Внутр. Д., на 8 мѣсяцевъ, выходитъ съ 1 октября 1888 г. въ объемѣ 2-хъ—3-хъ листовъ въ недѣлю.—Въ видѣ безплатныхъ приложеній къ «Газетѣ» годовые подписчики получаютъ: 1) парижскія моды съ рисунками и лучшими парижскими выкройками; 2) переводные романы и повѣсти 6 книгъ въ годъ.

Преміи годовымъ подписчикамъ: Крестный календарь на 1889 годъ и 6-й выпускъ иллюстрированныхъ драмъ Шекспира: «Сонъ въ лѣтнюю ночь», перев. С Юрьева.

Условія подписки на 1889 г.: безъ дост. на годъ 4 р., съ дост. и перес. 5 р. на полгода (съ 1 января и Іюля) 3 руб., на ¼ года—1 руб. 60 к. 1 мѣсяцъ 60 к. Заграницу—на годъ 7 руб., на полгода 3 руб. 50 коп. Разсрочка годовой платы допускается для казенныхъ учрежденій, училищъ и волостей по четвертямъ года именно: при подпискѣ взносится 2 р., въ слѣдующія четверти по 1 р. Учителя же всѣхъ училищъ, при взносѣ единовременно за годъ, или при полугодовой разсрочкѣ, платятъ, вмѣсто 5 р., 4 р. 50 к. (по полугодьямъ—по 2 р. 25 к.).

Подписная цѣна на 3 мѣсяца 1888 г.—съ 1-го октября по январь 1889 г.—1 руб. 60 к.

Подписка принимается: въ Москвѣ въ Главной конторѣ редакціи и въ лучшихъ магазинахъ.

За прежніе года, съ 1875 года, газету можно получать по 3 р. за томъ (годъ), безъ пересылки, кромѣ 1880 г. не имѣющагося уже въ продажѣ. Адресъ: Москва, Никитскій бульв., д. Гатцука. Редакторъ А. Гатцукъ. 1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ.*

Հինգշաբթի, դեկտեմբերի 22-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MENGRÈLIE) *շոգենաւը, նաւապետ* ԺԻԲՈՒԵՆ (GIBOIN) *դուրս կը գնայ* ԲԱԹՈՒՄԻՑ *դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսուն, Կ. Պօլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմշոյլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Արծրունի դալերէում, № 103.* 2—3 (շ. հ. ե.)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ВЪ ВАРШАВѢ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ՝ *Դլուգայա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ* ԱՌԵՒՏՐԱԿԱՆ *կենտրոնում՝* ԹԱՏՐՈՆՆԵՐԻ *և բոլոր* ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐԻ *կողքին։ 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական վարձով։*

ԿՕՆԴԻՏԷՐԻԱ *և* ՐԷՍՏՕՐԱՆ

Ճաշեր 30 կոպէկից մինչև 1 ռուբլի։

ՕՄՆԻԲՈՒՆՆԵՐ *և* ԿԱՌՔԵՐ *երկաթուղու բոլոր գնացքների համար։*

ԿԱՌՔԵՐԻ *վարձելը չափաւոր գներով։*

(Հ)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ

ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ
КОРОБКА 50 и 80 К.

ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ
БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.

ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ
КОРОБКА 30 К.

СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ՝ *Թիֆլիսում՝ կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ագմուրովի դեղատներում։* ԲԱԳՈՒԻ *մէջ՝ Բէկկէրի մօտ,* ԲՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ *կոկոչեվի մօտ,* ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ *Բրօխնոցկու մօտ և* ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (Հ.)

ՊՐՕՖԻԶՕՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼՅԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ, ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

Дозволено цензурою, Тифлисъ 14 Декабря 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.